

չոցին մէջ: Նոյն ձեռագիրը ընդօրինակողն է Ներսէս արեղա
Կրակցի, որոյ մասին կարևոր տեղեկութիւններ տրուած է («Սիոն»
Թիւ 2. էջ 52-53, 1927). Ինքը եղած է առաջին ստացողը եւ
երկրորդը՝ Երուսաղէմի Աբրահամ եպիսկոպոսը, որուն համար,
այլ զրոյժ յիշուած է հետեւեալը. « . . . եւս առաւել Տեր Աբ-
րահամ Երուսաղէմա եպս.ին որ զգիրքն ստացայ յիշատակ ինձ
և ծնողաց իմոց եւ ամենայն արեան մերձաւորաց, եւ մեծ Սա-
թուն որ զգրմ. երեւ »). ձեռագիրը ընդօրինակուած է Հայոց Ս.
Ստեփանոս վանքին մէջ, Երուսաղէմի Յովհաննէս ձօսարին պատ-
րիարքի օրով, 229 (= 1334) թուականին, ինչպէս կը հաստա-
տէ յիշատակարանին հետեւեալ հատուածը.

« . . . — Գրեցաւ ձեռակալ սևարժակի

Որ Ներսէս Կրակցի կոչի.

Ստուգանող պատրիարքի.

Եւ յսկզաւոր Տեսուն աւրիևի

Սուս քահանայի

Եւ մեղաւոր յսկեակցի

Ի Հայկազակս քուակսի

229 (= 1334) հասարի:

Ի վսևս Սեպակի,

Մեճ սոս դրուսն Հրեշտակապետսն Միխայելի եւ Գաբրիէլի
յԵրուսաղիւս սուրբ քաղաքի:

Եւ յստացնորդութեան Եղի. s. Յոհաննիսի

Որ աւելի սևուն ձաւչիև կոչի »

Ուրեմն, ըստ այս յիշատակարանի, Սիոնի վրայ Հայոց Ս. Ստե-
փանոսի վանքը կանգուն էր մինչև 1334 թուականն, եւ վերա-
գոյն յիշուած անանուն սլաւ ուղեգիրին համաձայն, նոյն վան-
քը անվնաս մնացած էր 1370 թուականին: Ժ. Ե. դարուն Ս.
Աթոռս ընդօրինակուած Տաղարանի մը յիշատակարանին մէջ,
ի շարս ազգային ուխտատեղեաց, ընդօրինակող Ներսէս երէց չի
յիշատակեր Ս. Ստեփանոսի վանքը (Նոսարի Հայոց, 18-19), հե-
տեաբար ան քանդուած կ'ըլլայ 1370-1447 թուականը, մեկ
անյայտ պատճառներով, 1483ին միայն Ա. կիւրմանցի Նիկողայոս
եպիսկոպոսը՝ իր կազմած Ս. Տեղեաց Յուցակին մէջ, կը յիշէ
Սիոնի կողմը, իբր ուխտատեղի «Ս. Ստեփանոսի գերեզմանը»,
եւ յիշեալը զանց չ'ընել յիշատակել հասել Ս. Քաղաքի պարիս-